



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

30 մայիսի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/4

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՏԱՇՐՁԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու **60** անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը տեղեկացրեց.

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի՝ Երևանի քաղաքի ավագանու անդամներ Էդուարդ Աղաջանյանի, Տիգրան Ավինյանի, Արայիկ Հարությունյանի, Ալեն Սիմոնյանի ավագանու անդամի լիազորությունները՝ դադարեցնելու մասին համապատասխան արձանագրությունները, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի **2018** թվականի մայիսի **24**-ի և **25**-ի թիվ **2, 3, 4** և **5** արձանագրությունների համաձայն, Երևանի ավագանու «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են համապատասխանաբար «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ Վիկտոր Ենգիբարյանին, Նելլի Ղարդյանին, Ռուբեն Ռուբինյանին, Նարա Հովհաննիսյանին:

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը շնորհակալություն հայտնեց ավագանու նախկին անդամներին՝ Երևանի ավագանու աշխատանքներում ունեցած ներդրման համար:

Նախքան օրակարգի նախագծին անդրադառնալը, ելույթ ունեցան ավագանու **2** անդամ.

**1.** Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

**2.** Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու **2018** թվականի մայիսի **30**-ի նիստի օրակարգի նախագիծը.

**1.** Երևանի ավագանու **3**-րդ նստաշրջանի **4**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

**2.** Ջանիբեկ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

**3.** Սեն Արևշատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

**4.** Ալբերտ Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

**5.** Մերգեյ Մերգեյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 60 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 57, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

**Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ**

**2. ԼՍԵՑԻՆ** - Ջանիբեկ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի խորհրդական Գագիկ Բաղդասարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռ.Սիրունյանը տեղեկացրեց, որ «Ջանիբեկ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Անի Սամսոնյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

3. Սոննա Աղեկյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի խմբակցության» ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ Ջանիբեկ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Արամ Խաչատրյան փողոց հ.21 հասցեում փակցնելու համար:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 56 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 49, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 4

**Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ**

**3. ԼՍԵՑԻՆ** - Սեն Արևշատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի խորհրդական Գագիկ Բաղդասարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռ.Սիրունյանը տեղեկացրեց, որ «Սեն Արևշատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Անահիտ Բախշյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Սոննա Աղեկյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** - Տալ համաձայնություն ակադեմիկոս Սեն Արևշատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ավագ Պետրոսյան փողոց հ. 2 հասցեում փակցնելու համար:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 59 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

**4. ԼՍԵՑԻՆ** - Ալբերտ Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի խորհրդական Գագիկ Բաղդասարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռ.Սիրունյանը տեղեկացրեց, որ «Ալբերտ Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1.Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

2.Անահիտ Բախշյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** - Տալ համաձայնություն ՀՀ և ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ալբերտ Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց հ.13 հասցեում փակցնելու համար:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 57 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

**5. ԼՍԵՑԻՆ** - Մերգեյ Մերգեյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի խորհրդական Գագիկ Բաղդասարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռ.Սիրունյանը տեղեկացրեց, որ «Մերգեյ Մերգեյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** - Տալ համաձայնություն ակադեմիկոս Մերգեյ Մերգեյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի շենքի պատին /Հակոբ Հակոբյան փողոց հ. 3/ փակցնելու համար:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 57 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

Երևանի քաղաքապետ Տ.Մարգարյանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել **2018** թվականի հունիսի **26**-ին, ժամը **11.00**-ին:

**ԸՆԴՄԻՋՈՒՄ.**

Նիստը վերսկսվեց ժամը **12.40**-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ /սղագրությունը կցվում է/:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**